ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

«Մուրճի» տարեկան բաժանորդագինը մաս-մաս վճարող այն բաժանորդները, որոնք չեն լրացրել իրանց վրայ ապառիկ մնացած մասը—չեն ստանալու ամսագրիս համարները, սկսած № 6-ից, մինչև որ չկատարեն իրանց պարտաւորութիւնը։ Խմբագրութիւնս հարկ է համարում նախազգուշացնելու որ օգոստոսի 1-ից անց չեն պահուելու այդ բաժանորդներին հասանելիք համարները. այնպէս որ կարող են սպառուած լինել այդ համարները, ինչպէս սպառուած են այժմ «Մուրճ»-ի 1905 թ. 2—5 №-երը։

Թիֆլիսում ընդհանուր բանուորական գործադուլի պատճառով 7 օր տպարանները չէին աշխատում. այդ պատճառով ուշացաւ «Մուրճ»-ի այս համարի լոյս տեսնելը։

Մի անգամ առիթ էինք ունեցել ծանանիշ անելու «Бакинс. Изв.» թերթի հայոց բաժնի ղեկավար Эненъ-ի մի անբարեխղճութիւնը. գրուածքի լոկ վերնագրից («Հրաշալի դար») մեծ ապլոմբով բովանդակութեան մասին դատավճիռներ կայացնելն և այդ գիտական տեսութիւնը բոման յորջորջելը։ Այժմ «Баку» թերթում հայոց բաժնի մի նոր ռեցենզենտ աւելի մեծ քաջագործութիւն է արել. նա նեղութիւն չի կրել նոյն իսկ վերնագրները ջոկել և այդ նրան չի խանգարել շատ «հեղինակաւոր» կարծիքներ և համեմատութիւններ անել։ Ինչպէս մեր ընթերցողը գիտէ «Մուրճում» տպւում են Արշակ Չօպանեանի յօդուածները «Մ. Պէշիկթաշլեանի» մասին, միաժամանակ տպւում են «Ռափայէլ Պատկանեանի նամակները»։ Արդ, «Баку»-ի պ. Նուշիրվանը այդ թերթի № 67-ում 32 տողի մէջ կարողացել է երկու ամսագրի մասին կարծիքներ յայտնել և թուել պարոնին հետաքրքրական երևացած մի քանի յօդուածները, որոնց մէջ նա գտել է статья армянскаго журналиста Чопаняна «объ армянскомъ поэтѣ Патканянѣ» (Камаръ-Катипа)... Ինչպէս տեսնում էք «Ռափայէլ Պատկանեանի նամակ-

ները» դառել են «Հօպանեանի յօդուածներ»։ Եւ այնքան տեղը պ. Նուշիրվանը համոզուած է եղել թէ չի սխալւում որ մինչև անդամ հարկ է համարել «Баку»-ի խեղճ ընթերցողներին բացատրել փակագծերի մէջ որ այդ Պատկանեանը՝ Գամառ-Քաթիպան է... Չէ՞ր կարելի արդեօք յանուն բարեխղճութեան պահանջել որ աւելի լուրջ վերաբերուեն այդ պարոնները իրանց ստանձնած չիչերոնիներ և մենտորներ լինելու դերերին։ Եթէ ուզում էք օտարացած հայերին ծանօթացնել մայրենի մամուլին՝ նախ և առաջ բարեհաճէք ինքներդ կարդալ և ապա միայն ուրիշներին մատնակից անել ձեր խոհերին և կարծիքներին, այլապէս դա մի տգեղ օյինբազութիւն է, մեծապատիւ պարոններ։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԺԸՆԵՎ.—պ. Ա. Ա.—Նամակը եւ «Դէպի Անի» գրուածքի շարունակութիւնը ստացանք։

ՆՈՐ-ԶՈՒՂԱ. Մ. Կ.—Զափազանց ուշացնում էք ձեռագրերի առաքումը։

ՆՈՐ-ԶՈՒՂԱ. Բ. վ. Վ.—Ձեր ուղած դասագրքից ուղարկուած են Надежда-ով 200 օրինակ, կազմուած։

ԹԷՀՐԱՆ.—Ալ. Թ.—Ձեզանից վաղուց է տեղեկութիւն չունենք։

ՎՐԻՊԱԿՆԵՐ

«Մուրճ»-ի № 6-ում։

Էջ	տող	տպուած է	պէտք է լինի
75	10	պնդեց	պնդել
77	13	1855—1895	1885—1895
80	22	պրոլետարիային	պրոլիտարիատին
71	22	«հատարիմ»	«հաւատարիմ»

«Մուրճ»-ի № 7-ում

146	4 վ.	Այ էդ	Այդ է